ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՌՑԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հարգելի՛ ուսանող,

ԵՊՀ ռեկտորատը կրթական որակի շարունակական բարելավման նպատակով մշակել է «Դասընթացների առցանց գնահատման համակարգ», որի հիմնական նպատակն է պարզել ուսանողների բավարարվածությունը ուսումնասիրած դասընթացներից և ծրագրերից: Հարկ է շեշտել, որ այս հարցման համակարգի միջոցով գնահատական է տրվում դասընթացներին ու ծրագրերին և ոչ թե դրանք դասավանդող դասախոսների աշխատանքին: Այդ իսկ պատճառով հարցման այս համակարգը չի փոխարինում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ հարցմանը, որին Դուք նույնպես մասնակցում եք:

Խնդրում ենք տրամադրել ժամանակ և պատշաճ մասնակցել հարցմանը: Ստորև ներկայացվող քայլերի հաջորդականությունը Ձեզ հեշտությամբ կուղորդի:

Քայլ 1. Մուտք համակարգի հիմնական էջ

Համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ է այցելել «Դասընթացների առցանց գնահատման համակարգ» հետևյալ հասցեով (նկար 1)՝

http://survey.ysu.am/



Նկար 1. Համակարգի հիմնական էջ

Քայլ 2. Մուտք Դասընթացների առցանց գնահատման համակարգ»-ի ուսանողի անհատական էջ (նկար 2)



Այստեղ անհրաժեշտ է մուտք անել ԵՊՀ-ի կողմից Ձեզ տրամադրված ուսանողական էլ. փոստի հասցեն և գաղտանաբառը:

Նկար 2. Ուսանողի անհատական էջ

Եթե համալսարանի կողմից Ձեզ տրամադրված ուսանողական էլ. փոստի հասցեն և գաղտանաբառը մոռացել կամ կորցրել եք, պետք է դիմել ֆակուլտետի դեկանատ:

Քայլ 3. Համալսարանական էլ. փոստի հասցեն և գաղտնաբառը հավաքելուց հետո կբացվի Ձեր անհատական էջը (նկար 3):



Նկար 3. Ուսանողի անհատական էջ

Այս էջի վերևի աջ մասում պետք է ընտրել անցած ուսումնական կիսամյակը, որի դասընթացները Դուք պետք է գնահատեք: Միաժամանակ այդ գործիքի միջոցով դուք կարող եք դիտել նախկինում գնահատած կիսամյակները (նկար 4):



Նկար 4. Կիսամյակներ

Այսպիսով գնահատման համար խնդրում ենք ընտրել անցած ուսումնական կիսամյակը:

Քայլ 3. Գնահատում

Կիսամյակն ընտրելու պարագայում կբացվի հաջորդ էջը, որտեղ կներկայացվեն համապատասխան կիսամյակի անցած դասընթացները (նկար 5): Յուրաքանչյուր դասընթացի գնահատման համար խնդրում ենք «սեղմել» այդ դասընթացի անվանման վրա, որից հետո կբացվի համապատասխան հարցաշարը (նկար 6):



Նկար 5. Համապատասխան կիսամյակի դասընթացներ



Նկար 6. Առանձին դասընթացի գնահատման էջ

Քայլ 4. Պահպանել կամ ավարտել (նկար 7)

Գնահատելուց հետո պետք է սեղմել Ավարտել կոճակը, անավարտ թողնելու դեպքում՝ Պահպանել կոճակը: Պահպանելուց հետո Վերադարձ հրահանգով կարող եք վերադառնալ դասընթացների ցանկին (նկար 3): Եթե ուզում եք փոխել ընդհանուր գնահատումը, կարող եք սեղմել Չեղարկել կոճակը:



Նկար 7. Պահպանել, Չեղարկել, Ավարտել

Ի դեպ Ավարտել սեղմելուց հետո Դուք այլևս չեք կարող գնահատել կամ չեղարկել: Պահպանելուց հետո Դուք կարող եք հետագայում վերադառնալ և փոխել տվյալ դասընթացի գնահատականը, շարունակել գնահատել և կրկին պահպանել կամ ավարտել:

Ուշադրություն. եթե դուք միայն պահպանել եք և չեք սեղմել Ավարտել կոճակը, ապա այդ գնահատումը չի համարվում ավարտված: Գնահատականների հաշվետվությունը դիտելու համար անհրաժեշտ է ավարտել գնահատումը:

Երբ Դուք գնահատում եք դասընթացը և ընտրում ավարտել հրահանգը, դասընթացների ցանկում՝ տվյալ դասընթացի դիմաց, նշվում է տվյալ գնահատման կարգավիճակը (գնահատված է, գնահատված չէ, գնահատվում է) (նկար 8):



Նկար 8. Գնահատման կարգավիճակ

Քայլ 5. Փակել համակարգը (նկար 9)

Աշխատանքն ավարտելուց հետո վերևի աջ անկյունում սեղմելով Դուրս գալ կոճակը՝ դուք կարող եք ավարտել Ձեր աշխատանքը համակարգում: Սահմանված ժամկետներում կարող եք կրկին մուտք գործել և շարունակել գնահատումը:



Նկար 9. Դուրս գալ

Ուշադրություն. յուրաքանչյուր կիսամյակի դասընթացների գնահատման համար սահմանված են հստակ ժամկետներ: Այդ ժամկետներից դուրս համակարգը գնահատում չի ընդունում: Խնդրում ենք ուշադիր հետևել սահմանված ժամկետներին:

Համակարգի հետ աշխատելու ընթացքում առաջացած խնդիրների պարագայում Դուք կարող եք դիմել Որակի ապահովման կենտրոն հետևյալ հեռախոսահամարով 060 710 014 կամ էլ. փոստով lilitkhachikyan@ysu.am